

ՄՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՄՏԵՂԾԱՐԱՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

*Մանուկյան Մ. Ա. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)
mariam.manukyan9@ysumail.am*

*Ավանեսյան Հ. Մ. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)
avanesyanh@ysu.am*

Ներկայացման ամս. 29.07.2020

Գրախոսման ամս. 08.08.20

Տպագրության ընդունման ամս. 11.08.2020

Սույն հոդվածում ներկայացված են հետազոտության արդյունքներ. որոշման կայացման, մտածողության ոճերի և ստեղծարարության դրսևորումների առանձնահատկությունների ազդեցությունը ստեղծագործական գործունեության արդյունավետությանը վրա: Գրականության վերլուծության միջոցով ուսումնասիրվել են ստեղծարարության տարբեր մեկնաբանություններ և մոտեցումներ, դուրս են բերվել ստեղծարարության տեսակները և ստեղծարարությունը պայմանավորող անհատական առանձնահատկությունները: Ուսումնասիրվել են նաև խնդիրների լուծման գործընթացը, դրանում դրսևորվող անհատական առանձնահատկությունները և ստեղծարար բնույթի խնդիրների առանձնահատկությունները: Հետազոտությունը իրականացվել է երկու խմբերի հետ, որոնց մասնակիցները տարանջատվել են ըստ մասնագիտությունների՝ համաձայն ստեղծարար գործունեության պահանջի աստիճանի: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ստեղծարարության դրսևորումը կապված է անհատական առանձնահատկությունների հետ, մասնավորապես՝ ստեղծարար խնդիրներ լուծելիս օրիգինալությունը պայմանավորված է իդեալիստական մտածողության ոճով, իսկ սահունությունը՝ որոշման կայացման անհատական կարգավորման ցուցանիշներից հետաձգման և գերզգայնության ցածր մակարդակով:

Հանգուցային բառեր՝ ստեղծարարություն, մտածողության ոճեր, խնդիրների լուծում, որոշման կայացման անհատական կարգավորման ոճ, կոգնիտիվ ոճ, ստեղծարար մասնագիտություններ:

Ժամանակին զուգընթաց, հասարակությունը ավելի շատ է հետաքրքրվում նորարարություններով, և հետևաբար, մեծանում է նաև ուշադրությունը տարբեր մասնագիտական ոլորտներում ստեղծարար առանձնահատկությունների դրսևորման նկատմամբ: Տնտեսության նորարական կառավարումը շեշտը դնում է աշխատողների ներուժի վրա. այդ պատճառով, բացի ստեղծարար

գործունեություն ուսումնասիրումից, կարևոր է նաև դուրս բերել, թե ինչպես են դրսևորվում անձնային գծերը և մտածողության ոճերը ստեղծարար բնույթի խնդիրների լուծման գործընթացում: Ստեղծարարությունը դիտարկվում է որպես ստեղծագործելու ընդհանուր ընդունակություն: Ստեղծարարությունը ոչ սովորական գաղափարներ մշակելու, օրիգինալ լուծումներ գտնելու, մտածողության ավանդական կառուցվածքներից շեղվելու մարդու ունակությունն է: Ստեղծարարության խնդրի վերաբերյալ գրականության վերլուծությունը ցույց է տվել, որ «ստեղծարարություն» հասկացությունը կարելի է դիտարկել երկու ուղղություններով. ստեղծարարությունը՝ որպես հոգեկան գործընթաց, և ստեղծարարությունը՝ որպես կյանքի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունք [2]: Դ. Հայրապետյանը նշում է. «ստեղծարարությունը ինտեգրալ հոգեկան որակ է, որը ձևավորվում է անձի մտածողական, ինտելեկտուալ, անհատական առանձնահատկությունների հենքի վրա՝ իր դրսևորումը գտնելով անձի կյանքի և կենսագործունեության տարբեր ոլորտներում» [1, էջ 3]: Ստեղծարարության մասին հասկացությունները հետազոտելիս՝ կարելի է այն բաժանել իրար կապված, բայց համեմատաբար անկախ մեծությունների. 1) ստեղծարարություն, որը դիտարկվում է որպես պրոդուկտ, 2) ստեղծարարություն որը դիտարկվում է որպես գործընթաց [11]: Օ. Բուտորինան (2003), փորձել է համակարգել ստեղծարարության սահմանումները: Այն դիտարկվում է որպես ստեղծագործելու կարողություն, մտավոր ստեղծագործություն, ինչ-որ նոր, օրիգինալ բան, ամբողջական համակարգի վերակառուցվածքավորում, տեղեկության ոչ սովորական կողավորում, դիվերգենտ մտածողություն, արդեն առկա գիտելիքների սահմաններից դուրս գալ, ոչ ստանդարտ մտածողություն, որը թույլ է տալիս հարթել խնդրային իրավիճակը և այլն [2]: Սակայն գոյություն ունի սահմանում, որը ընդունված է ժամանակակից հետազոտողների մեծամասնության կողմից. ստեղծարարությունը այնպիսի պրոդուկտ ստեղծելու ընդունակություն է, որը կրում է նորարարություն և համապատասխանում է այն համատեքստին, որում այն գտնվում է: (Amabile, 1996; Barron, 1988; Lubart, 1994; MacKinnon, 1962; Ochse, 1990; Sternberg & Lubart, 1995) [7] Ստեղծարարության դրսևորման նշված հոգեբանական յուրահատկությունները և դրանց ազդեցությունը անձի վարքագծի վրա նկարագրված են նաև ամերիկացի հեղինակների հայտնի դասագրքում [9]:

Ֆեյսթի կողմից իրականացված գրականության մետավերլուծությունը ցույց է տվել, որ ստեղծարար մարդիկ, որպես կանոն, ավելի ավտոնոմ են, բաց են նոր փորձի նկատմամբ, ինքնաբավ են, ինքնաընդունող, հավակնոտ, դոմինանտ, իմպուլսիվ և այլն (Bastick 1982) [13]: Բացի այդ, ստեղծարարությունը պայմանավորող անձնային գծերը ներառում են վերահսկման լուկուս (Bolen & Torrance, 1978), ինքնագնահատական (Dellas, 1978), դոզմատիզմ (Faschingbauer, Moore, & Stone, 1978), նարցիսիզմ (Solomon, 1985) և այլն: Կոգնիտիվ առանձնահատկությունները կարևոր նշանակություն ունեն ստեղծարարության համար,

ներառյալ այսպիսիները, ինչպիսիք են դաշտից կախյալություն-անկախություն (Noppe & Gallagher 1977; Spotts & Mackler 1967), մտածողության կամ խնդիրների լուծման ոճեր (Kershner & Ledger 1985; Noppe 1985) և այլն: Հետազոտողները, ընդհանուր առմամբ, համաձայն են, որ որոշ կոգնիտիվ օպերացիաներ կարող են բերել օրիգինալ գաղափարների և խնդիրների լուծումների առաջ քաշման [14]: Ստեղծագործելու համար առավել կարևոր են 1) սինթետիկ ընդունակությունը՝ խնդրին նոր կերպ նայելը, առօրյա գիտակցության սահմանների հաղթահարումը, 2) անալիտիկ ընդունակությունը՝ հետագա մշակման ենթարկվելու արժանի գաղափարների առաջադրումը, 3) պրակտիկ ընդունակությունները՝ կարողանալ մյուսներին համոզել գաղափարի արժեքավոր լինելու մեջ: Ռոջերսը իր ֆենոմենոլոգիական մոտեցման մեջ նկարագրում է անձնային գծերի և արտաքին հանգամանքների երկու խումբ, որոնք նպաստում են դրական ստեղծագործականությանը: Ամենից առաջ, դա ամբողջ փորձի նկատմամբ բացությունն է՝ ի հակադրում հոգեբանական պաշտպանությունների, որոնք բերում են փորձի աղճատմանը: Երկրորդ պայմանը վերահսկման ներքին լոկուսն է կամ սեփական կարծիքի վրա հիմնվելու ընդունակությունը: Երրորդը՝ տարրերի և հասկացությունների ոչ սովորական համադրություններ կառուցելու ընդունակությունն է, որը բերում է ինտուիցիայի արթնացմանը և նորը տեսնելու ընդունակության ձեռք բերելուն [2]: Ըստ Թ. Լյուբարթի՝ ներկայացման կոգնիտիվ ոճերը տեղեկատվության վերամշակման, անհատի կողմից նախընտրած միջոցներն են և այն, թե ինչպես են անձնային գծերը ազդում ստեղծագործական պրոդուկտի քանակի և բնույթի վրա: (Guastello, Shissler, Hyde, 1998; Huteau, 1987; Martinsen ; Kaufmann, 1999). Օրինակ՝ «անալիտիկ ոճը» առկա է նրանց մոտ, ովքեր ուղղում են իրենց մտածողությունը խնդրի դետալներին (Sternberg; Lubart, 1995): Ստեղծարարության և կոգնիտիվ ոճերի հետ կապերը կարող են լինել երկու տիպի: Մի կողմից՝ դրանք կարող են լինել որակական. ի տարբերություն անձնային գծերի և ինտելեկտի, կոգնիտիվ ոճերը պայմանավորում են ոչ թե ստեղծարարության մակարդակը, այլ դրա բնույթը: Կոգնիտիվ ոճերը կապված են այն բանի հետ, թե ինչպես են ստեղծարար մարդիկ առաջ քաշում գաղափարներ. այդ դեպքում խոսում են ստեղծարարության ոճերի մասին (Goldsmith, 1987): Մյուս կողմից՝ կոգնիտիվ ոճերի և ստեղծարարության մեջ կարող է լինել նաև քանակական կապ. այդ դեպքում կոգնիտիվ ոճերը ցույց են տալիս անհատի ստեղծարարության մակարդակը [7]:

Որոշ հետազոտությունների անդրադարձը վկայում է այն բանի մասին, որ ժամանակակից տնտեսության հիմնական հատկություններից մեկը ստեղծարարությունն է, իսկ գործունեության արդյունքը՝ նորարարական պրոդուկտը: Ստեղծարար տնտեսությունը ներկայացնում է գիտության, արվեստի մշակույթի ոլորտի տնտեսություն, որը հիմնված է ստեղծարար աշխատուժի բարձր կենտրոնացվածության վրա, հանդիսանում է նորարարությունների շարժիչ ուժ և նոր մոտեցումների մշակող ինչպես գիտության և հետազոտությունների

ուրրտում, այնպես էլ ձեռնարկատիրության, արվեստի, մշակույթի և դիզայնի ոլորտներում: Ստեղծարար տնտեսության միջոցով ստեղծվում են հասարակական զարգացման բարենպաստ սոցիալ-մշակութային պայմաններ, որոնք ապահովում են երկրի զարգացման կայունությունը և բարելավում են ներդրողական կլիման [8, էջ 94]: Ըստ Վ. Կարպենկոյի վերլուծության՝ ստեղծագործության տեսակները կարող են առանձնանալ՝ ըստ գործունեության ոլորտների: Նա նաև նշում է, որ Ե. Իլյինը առանձնացնում է գիտական, տեխնիկական, նկարչական, երաժշտական, գրականական, մանկավարժական ստեղծագործություններ, որոնք էլ իրենց հերթին բաժանվում են ենթատեսակների: Դրանցից որոշների միջև առկա են սերտ կապեր: Գիտական ստեղծագործությունը կապված է երևույթների և իրական աշխարհի զարգացման ընդհանուր օրինաչափությունների բացահայտման հետ: Տեխնիկական ստեղծագործությունը կապված է իրականության պրակտիկ (տեխնոլոգիական) փոխակերպման հետ: Այն իր հոգեբանական բնութագրիչներով մոտ է գիտական ստեղծագործությանը, սակայն ունի և տարբերություններ: Նկարչական ստեղծագործությունը կապված է իրականության էսթետիկ յուրացման և մարդկանց էսթետիկ պահանջմունքների բավարարման հետ: Մանկավարժական ստեղծագործությունը մանկավարժական գործունեության ոլորտում նորի փնտրելը և գտնելն է [3, էջ 144]: Խնդիրների լուծումը մի գործընթաց է, որի ընթացքում գլխուղեղը փնտրում է տրված խնդրի լուծումը կամ տրված նպատակին հասնելու ճանապարհը: Երբ խնդրի օբյեկտը արդեն պարզ է, խնդրի լուծումը կարող է ընկալվել որպես հիշողության մեջ լուծման նպատակների և այլընտրանքային ուղիների միջև կապի փնտրման գործընթաց: Խնդիր լուծելը գլխուղեղի բնական կարողության հասարակ կենսական ֆունկցիաներից մեկն է: Անհատի կայացրած ամենօրյա որոշումների մեծամասնությունը կապված է որոշակի խնդիրների հետ, որոնք պետք է լուծվեն՝ անկախ այն բանից, թե որքան պարզ կամ ընդհակառակը՝ ճգնաժամային են [12] :

Մարդիկ էականորեն տարբերվում են՝ ըստ խնդիրների լուծման գործընթացի ժամանակ դրսևորվող իրավիճակային ազդեցությունների նկատմամբ ընկալունակության աստիճանի: Հետազոտությունները ցույց են տվել, որ խնդիրներ լուծելիս մարդիկ տարբերվում են այնպիսի բնութագրիչներով, ինչպիսիք են ճկունությունը, նախաձեռնողականությունը, ինքնավստահությունը: Գոյություն ունեն տվյալներ, որոնք փաստում են, որ սոցիալական ճնշումներին հարմարվելու միտումը կապված է խնդիրների լուծման ցածր արդյունավետության հետ: Օրինակ է բերվում Նակամուրայի (1958) այն հետազոտությունը, որի համաձայն կոնֆորմ ուսանողները խնդիրները զգալիորեն վատ են լուծում, քան նրանք ովքեր անկախ են իրենց դատողություններում: Ընդհանուր առմամբ, ստեղծարարություն պահանջող խնդիրներ լուծող մարդկանց անհատական առանձնահատկությունների ուսումնասիրությունը առանձնացրել է հետևյալ անձնային գծերը՝ ճկունություն, նախաձեռնողականություն, ինքնավստահություն, փորձի

նկատմամբ բացություն: Բացի այդ, հեղինակները նշում են, որ ստեղծարարություն պահանջող գործունեությամբ զբաղվող մարդիկ ունեն հարմարվողականության ցածր ցուցանիշներ [6]: Վանզը իր հոդվածում անդրադարձել է խնդիր լուծողների կոգնիտիվ առանձնահատկություններին: Հոգեբանական հատկանիշները, որոնք կարող են օգտակար լինել խնդիրների հաջող լուծմանը, հետևյալն են՝ խնդրի նպատակները դուրս բերելու կարողություն, համառություն, ճիշտ ռազմավարություն ընտրելու կարողություն, լուծման ընթացքին հետևելու և լուծման ընթացքի նախկին կետին վերադառնալու կարողություն [11]: Ի տարբերություն ստեղծագործականի, ոչ ստեղծագործական խնդիրների լուծման դեպքում, լուծման ընթացքը ևս բարդ է, բայց մեխանիզմը հայտնի է: Ստեղծագործական խնդրի լուծման մտային-հոգեբանական մեխանիզմը ելքային ստեղծագործական խնդրի՝ հայտնի ոչ ստեղծագործական խնդրի հետ համադրումն է: Ստեղծարար խնդիրների լուծումը միշտ կապված է կարծրատիպերի փոփոխման հետ: Մտածողության կարծրատիպերի փոփոխությունը անհրաժեշտ բաղադրիչ է ստեղծագործական խնդիրների լուծման բոլոր փուլերում: Բացի այդ, որքան մեծ է խնդիրը լուծողի փորձը, այդքան շատ խնդիրների տիպերի է նա ծանոթ, և հետևաբար, այդքան շատ տեսակի խնդիրներ կարող են նրա համար ունենալ սովորական, այլ ոչ թե ստեղծարար բնույթ: Այսինքն, «ստեղծագործական խնդիր» հասկացությունը հարաբերական հասկացություն է [4]: Այն խնդիրների համար, որոնց լուծման ժամանակ հնարավոր չէ մտածել դետերմինիստական ռազմավարություն, արդյունավետ ալգորիթմ կարող է լինել այն, երբ լուծման են հասնում հնարավորինս քիչ տակտիկաներ փոխելով, հետևաբար, քիչ քայլեր ձեռնարկելով [10]: Ստեղծարարության մեկ այլ չափանիշ է գաղափարների գեներացման հեշտ լինելը: Եթե մարդը խնդրի լուծման համար առաջադրում է գաղափարների մեծ քանակ, ապա նա դրսևորում է ստեղծագործ մոտեցում: Գաղափարների մեծ քանակից ավելի հեշտ է ճիշտ տարբերակներ ընտրելը: Հաջորդ չափանիշը առաջադրվող գաղափարի լայնությունն է, այսինքն՝ դրա օգնությամբ տարբեր տեսակի մեծաքանակ գործոնների բացատրությունը: Գաղափարները գնահատվում են նաև ըստ խորության: Խորն է այն գաղափարը, որը կապեր է հաստատում այն օբյեկտների և դրանց հատկությունների միջև, որոնք պահանջում են երևույթի էության մեջ թափանցում[5]:

Այսպիսով, տեսական վերլուծությունը նպաստեց ստեղծարարության ֆե-նոմենի հիմնական բնութագրիչների ամփոփմանը և հետազոտության փորձարարական ռազմավարության մշակմանը:

Մեր կողմից իրականացվել է հետազոտություն, որն ուղղված է ստեղծարարության մակարդակի դուրս բերմանը, մտածողության ոճերի, որոշման կայացման անհատական կարգավորման միջոցների և անձնային գծերի ուսումնասիրմանը: Հետազոտության ընտրանքն են կազմել 66 մասնակիցներ՝ երկու խմբով. առաջին խումբը կազմում են ստեղծարարություն պահանջող մասնագիտություն ունեցողներ (դիզայներներ, ճարտարապետներ, նկարիչներ և

այլն), իսկ երկրորդ խումբը՝ ստեղծարարության ավելի քիչ դրսևորում պահանջող մասնագիտություն ունեցողները (իրավաբաններ, տնտեսագետներ): Հետազոտության շրջանակներում կիրառել ենք գիտափորձի և թեստավորման մեթոդները, գիտափորձի արդյունքները ընդհանրացնելիս իրականացրել ենք որակական վերլուծություն: Հետազոտություն համար կիրառվել են երկու հայերեն տեղայնացված հարցարաններ: Առաջինը՝ «Մելբուրնյան որոշման կայացման հարցաթերթիկ» (Melbourne Decision Making Questionnaire), որն ուղղված է ֆիքսված անորոշության պայմաններում որոշման կայացման անհատական կարգավորման տեսակների բացահայտմանը: Այն դուրս է բերում 4 հատկանիշ, որոնք վկայում են պրոդուկտիվ (զգոնություն-vigilance) և ոչ պրոդուկտիվ (խուսափում-back-passing, հետաձգում-procrastination և գերզգոնություն-hypervigilance) կոպինգների մասին: Երկրորդը՝ Հարիսոնի և Բրեմսոնի կողմից մշակված «Մտածողության ոճեր» հարցարանը, որը նախատեսված է նախընտրած մտածողության ոճի, հարցեր տալու և որոշման կայացման եղանակների դուրս բերման համար: Այն դուրս է բերում հինգ մտածողության ոճ՝ սինթետիկ, իդեալիստական, պրագմատիկ, անալիտիկ և ռեալիստական:

Գիտափորձի շրջանակներում երկու խմբի հետազոտության մասնակիցներին առաջադրել ենք խնդրային իրավիճակներ, որոնց համապատասխան անհրաժեշտ էր հնարավորինս շատ քանակի լուծումներ առաջարկել: Խնդրային առաջադրանքները կազմվել էին մեր կողմից: Առաջարկվել է երկու խնդրային իրավիճակ, և ամեն իրավիճակի համար տրվել է հինգ ընտանյակ: Վերլուծության համար ընտրել ենք հետազոտվողների լավագույն արդյունքը (Best Score): Հաշվի առնելով այն փաստը, որ գեներացված տարբերակների ընդհանուր քանակը չի կարող համարվել ստեղծարարության բացարձակ ցուցիչ, գիտափորձի արդյունքները վերլուծվել են ըստ ստեղծարարության հետևյալ չափանիշների՝ ճկունություն (կամ համապատասխանություն) և օրիգինալություն (կամ եզակիություն): Օրիգինալությունը հետազոտվողի կողմից տրված պատասխանների այն քանակն է, որը ոչ մի այլ հետազոտվողի մոտ չի կրկնվում: Իսկ ճկունությունը՝ պատասխաններ առաջադրելիս՝ մի կարգի օբյեկտներից մեկ այլ կարգի օբյեկտների անցման քանակն է: [7] Օրիգինալության և ճկունության ցուցանիշները դուրս բերելու համար իրականացրել ենք որակական վերլուծություն: Ճկունությունը որոշելու համար դուրս ենք բերել վեց կատեգորիա, որոնց համապատասխան դասակարգել ենք առաջարկված պատասխանները: Տվյալ դեպքում, ճկունության բարձր մակարդակի մասին է վկայում տրված պատասխանների՝ հնարավորինս շատ կատեգորիաների պատկանելը:

Հետազոտությունից դուրս բերված տվյալները վերլուծվել են SPSS IBM Statistics 22.0 վիճակագրական ծրագրով: Պայմանավորված այն հանգամանքով, որ օրիգինալության ($P=0.0001$) և ճկունության ($P=0.001$) ցուցանիշների բաշխվածությունը նորմալ չէ, քանի որ $P<0.05$ (երկու դեպքում էլ), վերլուծությունը իրականացնելիս օգտվելու ենք Սպիրմենի գործակցից: Արձանագրված

վիճակագրական օրինաչափությունը կարող է պայմանավորված լինել ոչ միայն մասնակիցների քանակով, այլև ուսումնասիրվող անհատական հատկանիշների յուրահատկություններով: Այդ պատճառով, ստեղծարարության արդյունավետության ցուցիչներից օրիգինալության և ճկունության և կոգնիտիվ առանձնահատկությունների միջև կապ դուրս բերելու խնդիր է առաջադրվել: Դիտարկենք մտածողության ոճերի և օրիգինալության ցուցանիշների միջև փոխկապակցվածությունը: Արդյունքները ամփոփված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Օրիգինալության և մտածողության ոճերի միջև փոխկապակցվածություն

Գործոններ		Օրիգինալություն
Իդեալիստական մտածողության ոճ	Մալիրմենի կռեկացիոն գործակից	0.571**
	Նշանակալիության գործակից	0,001

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ից, առկա է ստատիստիկ նշանակալի, ուժեղ դրական փոխկապակցվածություն իդեալիստական մտածողության ոճի և օրիգինալության մակարդակի միջև: ($P=0.0001$, $r=0.571$, $p=0.001$): Այժմ դիտարկենք որոշման կայացման անհատական կարգավորման միջոցների և ճկունության միջև առկա փոխկապակցվածությունը: Այն ամփոփված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Ճկունության և որոշման կայացման անհատական կարգավորման միջոցների միջև փոխկապակցվածություն

Գործոններ		Հետաձգում	Գերզգոնություն
Ճկունություն	Մալիրմենի կռեկացիոն գործակից	-0.038*	-0.402*
	Նշանակալիության գործակից	0,035	0.025

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, առկա է ստատիստիկ նշանակալի բացասակալն կապ ճկունության և որոշման կայացման անհատական կարգավորման միջոցներից հետաձգման ($P=0,0001$, $r=-0.038$, $p=0.035$) և գերզգոնության ($P=0.0001$, $r=-0.402$, $p=0.025$) միջև: Այսինքն՝ ստեղծարար խնդիրներ լուծելիս՝ մարդը գործում է արագ և որոշման կայացման վրա երկար ժամանակ չի ծախսում:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ստեղծարար խնդիրներ լուծելու ժամանակ արդյունավետության դրսևորումը պայմանավորվում է մտածողության ոճերով և որոշման կայացման անհատական կարգավորման միջոցներով, մասնավորապես՝ իդեալիստական մտածողության ոճով և որոշում կայացնելիս հետաձգման և գերզգոնության մեխանիզմները կիրառելու հակվածությամբ: Միևնույն ժամանակ պարզվեց, որ ստեղծագործական ոլորտի մասնագետի անհատական առանձնահատկությունների դրսևորումը ստեղծարար խնդիրների լուծման գործընթացում հիմնահարցի սույն ուսումնասիրությունը նպաստեց մշակված մեթոդաբանական մոտեցման հիմնավորմանը և մատնանշեց հետագա հետազոտության քայլերի ճշգրտման ու հեռանկարի ապացուցմանը:

Գրականություն

1. **Հայրապետյան Դ. Ռ.** Ստեղծարարության զարգացման և անձնային առանձնահատկությունների դրսևորման օրինաչափությունները. Հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր: Եր.:, 2007 թ., 21 էջ:
2. **Ильин Е.П.** Психология творчества, креативности, одаренности. Издательский дом" Питер"; 2009, с. 434.
3. **Карпенко В.В.** Творчество и креативность как психологические феномены. Теоретичні і прикладні проблеми психології. 2013 (2): с. 140-150.
4. **Коломиец С. М.** Психологические аспекты решения творческих задач. Гуманитарные научные исследования.(1-17), 2013
<https://elibrary.ru/item.asp?id=18962817>, Սյգ՝ 03.03.2020:
5. **Кошелева Д. С.** Исследование креативности студентов-первокурсников ММИ УрФУ и разработка мероприятий по её развитию, Екатеринбург 2014.- 88с.
6. **Креч Д., Крачфилд Р., Ливсон Н.** "Факторы, определяющие решение задач." Психология мышления/Под ред. ЮБ Гиппенрейтер, ВВ Петухова.М.: Изд-во Моск. ун-та (1981): с. 289-298.
7. **Любарт Т.** Психология креативности / [Т. Любарт, К. Муширу, С. Торджман, Ф. Зенасни]. М.: Когито-Центр, 2009. – 215 с.
8. **Скоробогатов М.В., Латышев Н.В.** . Роль креативных индустрий в инновационных процессах. Актуальные проблемы экономики и менеджмента. 2018. № 1(17). с. 94-103
9. **Glover G., Ronning R., & Reynolds, C.** (Eds.). (1989). Handbook of creativity: Perspectives on individual differences. New York: Plenum, 447p.
10. **Lee N.L. & Johnson-Laird P.** Creative strategies in problem solving. Proceedings of the Annual Meeting of the Cognitive Science Society, (2004), p. 26.
<https://escholarship.org/uc/item/6896941q>, Սյգ՝ 22.02.2020
11. **Penagos-Corzo J.C., Vargas M.A.** Challenges in Creativity and Psychology for the XXI Century, Mexico, 2018. 340p.
<https://repository.javeriana.edu.co/handle/10554/45624>. Սյգ. 02.06.2020
12. **Wang Y ., Chiew V.** On the cognitive process of human problem solving. Cognitive Systems Research 11, pp. 81-92 (2008).
https://www.researchgate.net/publication/222705878_On_the_cognitive_process_of_human_problem_solving, Սյգ՝ 06.08.2019
13. **Wolfradt U., & Pretz J. E.,** Individual differences in creativity: personality, story writing, and hobbies. European Journal of Personality, (2001), 15(4), pp. 297–310//<https://onlinelibrary.wiley.com/doi/abs/10.1002/per.409> Սյգ՝ 24.08.2019

14. **Woodman R. W., & Schoenfeldt L. F.**, Individual Differences in Creativity. Handbook of Creativity, Springer, Boston, MA (1989), pp. 77-91// https://link.springer.com/chapter/10.1007/978-1-4757-5356-1_4.
Цыг` 22.02.2020

ПРОЯВЛЕНИЕ ИНДИВИДУАЛЬНЫХ ОСОБЕННОСТЕЙ ТВОРЧЕСКОГО СПЕЦИАЛИСТА В ПРОЦЕССЕ РЕШЕНИЯ КРЕАТИВНЫХ ЗАДАЧ

*Манукян М. А. (ЕГУ, Ереван, Армения),
Аванесян Г. М. (ЕГУ, Ереван, Армения)*

В статье представлены результаты исследования особенностей проявления индивидуальных качеств в процессе решения креативных задач специалиста в сфере профессиональной творческой деятельности. В процессе теоретического анализа изучены различные интерпретации креативности и научные подходы к исследуемой проблеме, что позволило выделить виды креативности и индивидуальные особенности личности обуславливающие её эффективность. Проведённый эксперимент позволил выявить обусловленность результата решения креативных задач от некоторых индивидуальных особенностей личности. Исследование было проведено с двумя группами специалистов: специальности, требующие и специальности, не требующие креативного подхода. Результаты исследования показали, что проявление креативности связано со следующими индивидуальными особенностями: оригинальность при решении креативных задач обусловлена идеалистическим стилем мышления, а из показателей индивидуальных стилей принятия решений обнаружена статистически значимая связь с беглостью, низким уровнем прокрастинации и гипербдительности.

Ключевые слова: *креативность, стили мышления, решение задач, индивидуальный стиль принятия решений, когнитивный стиль, креативные профессии.*

MANIFESTATION OF INDIVIDUAL CHARACTERISTICS OF A CONSTRUCTIVE SPECIALIST IN THE PROCESS OF SOLVING CREATIVE PROBLEMS

*Manukyan M. A. (YSU, Yerevan, Armenia)
Avanesyan H. M. (YSU, Yerevan, Armenia)*

This article is devoted to the study of the features of decision-making, thinking, and manifestations of creativity which determine the effectiveness of the creative activity. With the help of literature analysis, we studied various interpretations, approaches to creativity and the individual features which determine creativity.

Besides, we studied the problem-solving process, the individual features which are manifested in the problem-solving process and the main characteristics of creative problems. The study was conducted with two groups of specialists: specialities that require a creative approach and specialities that don't require a creative approach. The results of the research showed that the manifestation of creativity is related with individual characteristics, in particular: the expression of originality in creative problem solving is conditioned by the idealistic style of thinking and the fluency is conditioned by a low level of procrastination and hypervigilance from the individual decision-making styles.

Keywords: creativity, thinking styles, problem-solving, individual decision-making styles, cognitive styles, creative professions.